

ԲԱԼԹԻԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Դավիթ Գյուրջինյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՀ լեզվի կոմիտե

ՀՀ, Երևան, Կիևյան 16

Էլ. հասցե՝ gyurjidav@mail.ru

Հոդվածը ներկայացվել է 12.03.2021, գրախոսվել է 20.03.2021,

ընդունվել է տպագրության 28.06.2021

DOI: 10.53548/03208117-2021.2-217

Ներածություն

Բալթիական լեզուները, որոնք մտնում են հնդեվրոպական լեզվա-ընտանիքի մեջ, բաժանվում են երկու՝ արևմտյան և արևելյան խմբերի: Արևմտյան խմբին է պատկանում պրուսերենը, որը XVIII դարից մեռած լեզու է: Արևելյան բալթիական լեզուներն են մերձբալթյան երկու երկրների՝ Լատվիայի և Լիտվայի տեղաբնիկ ժողովուրդների՝ լատիշների կամ լատվիացիների և լիտվացիների լեզուները: Այս լեզուների անունները վերջին հարյուրամյակի հայերենում գործածվում են տարբերակներով¹, և այդ անմիօրինակությունը, կանոնարկման բացակայությունը ուսումնական և գիտական գրականության մեջ որոշակի դժվարություններ են ստեղծում:

Սույն հետազոտությամբ կներկայացնենք բալթիական այս լեզուների հայերեն անունների բոլոր տարբերակները, դրանց գործածության շրջանակը և հաճախականությունը, բառարանային գրանցման պատմությունը, գործածողների նախապատվությունները՝ ըստ այդմ անելով համապատասխան եզրակացություններ: Մեր առաջադիր նպատակն է խնդրի շուրջ քննարկում ծավալել և ուսումնասիրվող անունների հարցում հանգել միասնական մոտեցման, հայերեն գիտական անվանակարգում միօրինակություն հաստատել և կանոնարկել: Դա յուրաքանչյուր զարգացած լեզվի բնորոշ հատկանիշ է:

¹ Երբեմն առանձին լեզու են ընկալում նաև լատհալերենը, որը Լատվիայի Դաուգավա գետից հյուսիս ընկած տարածքում խոսվող բարբառ է (գրավոր առաջին հուշարձանները XVIII դարից են): **Լատհալերեն** բառը հայերենում տարբերակայնություն չի դրսևորում:

Այս աշխատանքը կնպաստի աշխարհի լեզուների հայերեն անունների ճշտված, տարբերակայնությունից զերծ ընդունելի համապարփակ ցանկի ստեղծմանը:

Ա. ԼԱՏԻՇՆԵՐԻ (ԼԱՏՎԻԱՑԻՆԵՐԻ) ԼԵՉՎԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՆՈՒՆԸ

Լատվիայի միակ պետական լեզուն երկրի բնիկ բնակչության՝ լատիշների (կամ լատվիացիների) լեզուն է, որի այբուբենը լատինագիր է, գրավոր աղբյուրները՝ XVI դարից: Վերջին հարյուրամյակում այս լեզվի հայերեն անվան մի քանի տարբերակներ են գործածվել (և գործածվում): Ներկայացնենք դրանք:

1. ԼԵԹԹԵՐԵՆ

Հայերեն մասնագիտական գրականության մեջ բալթյան այս լեզվի համար սկզբնապես գործածվել է **լեթթերեն** անունը: Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» (առաջին՝ ապակետիպ հրատարակությունը՝ Երևան, 1926-1935)՝ «Լեզուների ցանկում», դասական ուղղագրությամբ ընդգրկված է **լեթթերեն** անունը՝ **լեթթ**. համառոտագրությամբ²: Քննարկվող լեզուն գերմաներեն կոչում են Lettische Sprache, երկրանունը՝ Lettland (XIX դարում առաջատար էր գերմանական պատմահամեմատական լեզվաբանությունը, Աճառյանի ուսուցիչներից մեկը գերմանացի Հ. Հյուբշմանն էր): Բառակազմական **լեթթ**- հիմքին հայերենում ավելացել է «լեզու» նշանակող **-երեն** վերջածանցը:

Հր. Աճառյանն այս լեզվանունն է գործածել իր մյուս աշխատություններում ևս: Այսպես, օրինակ՝ «Լիվոներենը, որ հիմա մեռած լեզու է, խոսվում է իգական սեռի մեջ, մինչ այրերը խոսում են **լեթթերեն**»³: Աճառյանի ազդեցությամբ այս բառը գործածվել է ուրիշ հայագետների ստուգաբանական և պատմահամեմատական հետազոտություններում⁴:

Հր. Աճառյանի երկերում հանդիպում է նաև **լետտերեն** ձևով⁵: Գր. Ղափանցյանը գործածել է **լետտերեն**-ի **լետտ**. համառոտագրությունը⁶,

² Աճառյան 1971, 64:

³ Աճառյան 1952, 404, 467, նաև 1957, 1007, Աճառյան 1940, 34 և այլն:

⁴ Տե՛ս, օրինակ, Բեդիրյան 1966, 225, նաև «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր» 1979, 376:

⁵ Աճառյան 1940, 327:

որը Ա. Մեյեի հայագիտական աշխատությունների հայերեն թարգմանության մեջ **լետ**. ձևով է⁷ (լեզվանունը ֆրանսերեն՝ *letton, langue lettone*, երկրանունը՝ *Lettonie*):

Արևելահայերենի բացատրական բառարաններում **լեթերեն**-ը գլխաբառ չի դարձել: **Լատիշերեն**-ին արված հղումով գրանցվել է ծեռագրի իրավունքով լույս տեսած հայ-ռուսերեն լեզվաբանական բառարանում, Հովհ. Բարսեղյանի ուղղագրական-տերմինաբանական բառարանում և «Լեզվաբանական բառարանում»⁸, այս վերջինում արձանագրված **լեթթո-սլավոնական**-ը հղվել է **բալթիկ-սլավոնական**-ին: Ի դեպ, **լեթթո-սլավոնական**-ը ևս ուղղագրական-բառակազմական տարբերակ ունի՝ **լետասլավոնական** կամ **լետա-սլավոնական**⁹, ինչպես և հազվադեպ **սլավոլետտական**¹⁰:

Արևմտահայերենի թարգմանական նշանավոր բառարաններից մեկում տրված է **լեթերեն** անվան ուղղագրական մի տարբերակը՝ **Լիտտերէն**¹¹ (ի-ով և տ-երով):

Լեթերեն-ն այժմ հասկանալի է միայն գիտական նեղ շրջանակներին, հայերենի ներկա փուլում այն հնաբանություն է: Լեզվանվան այս տարբերակը բացակայում է ակադեմիական և Էդ. Աղայանի բացատրական բառարաններում:

2. ԼԱՏԻՇԵՐԵՆ

Ժամանակագրական առումով **լատիշերեն** բառն ավելի ուշ՝ խորհրդային շրջանում է կազմվել և գործածության մեջ մտել: Բառա-

⁶ Ղափանցյան 1961, 292 և այլն: Համեմատության համար ասենք, որ, օրինակ, նույն **հար** արմատի բառահոդվածում Հր. Աճառյանը գործածում է **լեթթ**. Համառոտագրությունը (Աճառյան 1977, 53):

⁷ Մեյե 1978, 159, 163 և այլն: Այս գրքում հանդիպում է նաև լատվերեն տարբերակը (էջ 153):

⁸ Հարությունյանց 1963, 106, Բարսեղյան 1973, 389, Պետրոսյան, Գալստյան, Ղաբաղյույան 1975, 133:

⁹ Մեյե 1978, 11, 12, 152, 154 և այլն (թարգմանիչ՝ Մ. Մինասյան):

¹⁰ Աղայան 1958, 234. գործածվել է Հ. Հյուբշմանի նշանավոր հոդվածի եզրակացության հայերեն թարգմանության մեջ. «Հայերենը գտնվում է արիական-սլավոլետտական լեզուների շարքում՝ իրանականի և սլավոլետտականի միջև»: Մեկ այլ թարգմանությամբ՝ «Այդ պատճառով այն որպես ինքնուրույն լեզվաճյուղ պետք է տեղադրել իրանականի և սլավոնալիտականի միջև» (Հյուբշման 1990, 75, թարգմանությունը՝ Լ. Հովսեփյանի):

¹¹ Գույումճեան 1970, 1131:

կազմական հիմքը՝ **լատիշ**, անմիջականորեն կապվում է մերձբալթյան ժողովրդի ինքնանվանման (լատվիշ) հետ: Լեզվի անվան այս տարբերակը ստեղծվել է ռուսերենի ազդեցությամբ (հմմտ. латышский язык):

Էդ. Աղայանի համալսարանական հայտնի դասագրքում քննարկվող լեզուն ներկայացվել է **լատիշերեն** անվամբ¹², այս անունն է գործածել նաև իր գիտական աշխատություններում, ինչպես և նախապատվություն տվել իր կազմած բացատրական բառարանում¹³: Իհարկե, ավելի վաղ ակադեմիական բացատրական բառարանում է **լատիշերեն**-ին նախապատվություն տրվել¹⁴:

Լատիշերեն տարբերակի «դիրքերի ամրապնդմանը» նպաստեց «Լեզվաբանական բառարանը», որտեղ այն գլխաբառ է, բառահոդվածում որպես տարբերակ նշվում է նաև **լեթերեն**-ը¹⁵: **Լատիշերեն**-ը կիրառվել է համալսարանական ուրիշ դասագրքերում, նաև դպրոցական դասագրքերում¹⁶ և այլն:

Միալեզվյան բառարաններից առանց տարբերակի՝ միայն **լատիշերեն**-ն է գրանցել հանգաբառարանը¹⁷:

Լատիշերեն-ը արձանագրվել է հայերենի նաև թարգմանական բառարաններում: Հայ-ռուսերեն, հայ-ադրբեջաներեն, հայերեն-ֆրանսերեն և (արևելա)հայերեն-գերմաներեն բառարաններում այս տարբերակն արձանագրված է առանց որևէ տարբերակի¹⁸: Ա. Բարլեզիզյանի հայերեն-ֆրանսերեն բառարանում տարբերակներով տրված են **լատիշ(ուհի)/լատվիացի, լատիշական/լատվիական, լատվիական/լատիշական**, այնինչ լեզվի անունը ներկայացված է կրկին առանց տարբերակի՝ միայն **լատիշերեն** - letton m, languef lettone¹⁹:

¹² Աղայան 1967, 577, 611, նաև Աղայան 1987, 710:

¹³ Աղայան 1974, 20, 26, 76, Աղայան 1976, 518:

¹⁴ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1972, 386:

¹⁵ Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան 1975, 124:

¹⁶ Տե՛ս, օրինակ, Խաչատրյան 2008, 265, Խաչատրյան 2017, 140, Եզեկյան և ուրիշներ 2009, 7, Գյուրջինյան, Հեքեքյան 2010, 5:

¹⁷ Հայոց լեզվի հանգաբառարան 1976, 354:

¹⁸ Ղարիբյան, Տեր-Մինասյան, Գևորգյան 1960, 174, Բեդիրյան, Ղարիբյան, Անմեդիկյան 1987, 377 (հեղինակների մոտեցումը նույնն է այստեղ՝ Հայ-ռուսերեն գործնական բառարան 2010, 143), Բաղդամյան, Խալիլով 1978, 195, Գաբրիելյան, Սարգսյան և ուրիշներ 2000, 149, Գասպարյան 1999, 134:

¹⁹ Բարլեզիզյան 2009, 373:

Ա. Ղարիբյանի ռուս-հայերեն բառարանում латвийский ածականը թարգմանված է **լատվիական, լատիշական**, բառահոդվածում латвийское искусство-ն՝ լատվիական արվեստ, իսկ латышский - **լատիշական** բառահոդվածում латышский язык-ը՝ լատիշական լեզու, **լատիշերեն**²⁰:

3. ԼԱՏՎԵՐԵՆ

Բառակազմական հիմքը երկրանունն է (**Լատվիա**), որի **-իա** մասնիկն ընկնում է, ավելանում է **-երեն** վերջածանցը: Հայերենում այսպես է կազմվել լեզվանունների մեծ մասը²¹:

Հարկ է արձանագրել, որ այս տարբերակը՝ իբրև բառարանային առանձին միավոր, հանդիպում է միայն դպրոցական ուղղագրական բառարանում²² և չկա տարիներ անց լույս տեսած բացատրական, լեզվաբանական բառարաններում: Հայկական բազմահատորյա հանրագիտարանը խորհրդային հանրապետություններից մեկի հիմնական բնակչության լեզվի անունը ներկայացրել է երեք տարբերակով՝ **լատվերեն, լատիշերեն, լեթթերեն**²³: Փաստորեն նախընտրելի է համարվել առաջինը՝ **լատվերեն**-ը՝ որպես բառահոդվածի գլխաբառ: Բայց ահա տասնամյակներ անց Հանրագիտական բառարանում նշված հերթականությունը փոխվել է. լեզվի անունը ներկայացված է այսպես՝ **լատիշերեն (լատվերեն, լեթթերեն)**²⁴:

Գ. Զահուկյանը հետևողականություն է ցուցաբերել Լատվիայի ժողովրդի լեզվի անվան հարցում: Իր հիմնարար աշխատություններից մեկում մի քանի անգամ գործածել է **լատվերեն**-ը, թեև լեզուների ցանկում նշել է նաև **լատիշերեն**-ը՝ հղում անելով **լատվերեն**-ին²⁵: Մեկ այլ աշխատության մեջ նախ նշել է **լատվերեն**, ապա՝ փակագծերում՝ **լատիշերեն**, ստուգաբանական բառարանում ևս նույն կերպ է²⁶: Ակներև է, որ նախա-

²⁰ Ղարիբյան 1968, 431:

²¹ Մ. Աբեղյանի կարծիքով **-երեն** կամ **-արեն** վերջածանցներով բառերը կազմվում են «բոլոր ազգերի անուններից՝ վերջի **ացի** մասնիկը դուրս ձգելուց հետո. բացառություն՝ **վրացի-վրացերեն**» (Աբեղյան 1965, 254):

²² Ղարիբյան, Պարիս 1959, 109, Ղարիբյան, Շեկյան 1965, 71: Սակայն հետագայում այս բառը դուրս է թողնվել բառարանի մեկ այլ հրատարակությունից, որտեղ Լատվիայի լեզվի անունը չկա առհասարակ, իսկ **լիտվաներեն/լիտվերեն** տարբերակներից մնացել է **լիտվաներեն**-ը (Ղարիբյան, Շեկյան 1981, 103):

²³ Հայկական սովետական հանրագիտարան 1978, 498:

²⁴ Հանրագիտական բառարան 2016, 902:

²⁵ Զահուկյան 1960, 615:

²⁶ Զահուկյան 1987, 668, Զահուկյան 2010, 16:

պատվությունը տրվել է **լատվերեն**-ին, բայց և չի բացառվել **լատիշերեն** տարբերակը:

Լեզվաբաններից ոմանք որդեգրել են Գ. Զահուկյանի այս մոտեցումը՝ հրաժարվելով **լատիշերեն**-ից²⁷:

4. ԼԱՏՎԻԵՐԵՆ

Բառակազմական հիմքը ժողովրդի անվան մի տարբերակն է՝ **լատվիացի**, որի ազգ նշանակող ածանցը՝ **ացի**-ն, ընկնում է: Այլ մոտեցմամբ կարող ենք ասել, որ երկրանվան **-իա** մասնիկի **ա**-ն է ընկնում (հմմտ. **դանիերեն**, հնացած **գաղղիերեն**):

Ի հնչյունի առկայությունը պատահական չէ: Նախանցյալ դարում շրջանառվում էր, օրինակ, **անգլիերեն** լեզվանունը, և դա կանոնական էր ընկալվում²⁸:

Ակադեմիական բացատրական բառարանում արձանագրված է լեզվի անվան **ի**-ով տարբերակը՝ **լատվիերեն**, որից հղում է արվել **լատիշերեն**-ին, այդ բառահոդվածում էլ բացատրվել է բառը²⁹: Նշանակում է՝ նախընտրելի է դիտվել **լատիշերեն**-ը: **Լատվիերեն** տարբերակը, սակայն, սխալ է համարվել էդ. Աղայանի կազմած բացատրական բառարանում, դրանից հղում է արվում **լատիշերեն**-ին³⁰: Բայց հաշվի պիտի առնել այն իրողությունը, որ Հովհ. Բարսեղյանի ուղղագրական-տերմինաբանական բառարանում զետեղվել են բալթիական այս լեզվի անվան **լատիշերեն**, **լեթթերեն** և **լատվիերեն** տարբերակները (սրանց հետ նաև տարբերակային ուրիշ բառազույգեր՝ **լատիշ**, **լատիշուհի**, **լատվիացի**, **լատվուհի** և այլն)³¹, և դրանից որևէ մեկը սխալ չի համարվել: Դպրոցական ուղղագրական բառարանում բնականաբար զեղչվել է **լեթթերեն**-ը, քանի որ սովորողներին անձանոթ հնացած բառ է, և մնացել են **լատիշերեն**-ը՝ «լատ-

²⁷ Հմմտ. Սիմոնյան 1991, 312, նաև «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր» 1979, 376: Դա երևում է նաև **լատվ.** համառոտագրությունից (Սուքիասյան 1986, 138, 223, 230 և այլն (թեպետ մի տեղ՝ 34-րդ էջում, «փախել է» **լատիշ.** համառոտագրությունը), Հաննեյան 1998, 156, 158 և այլն, Աղաբեկյան 2017, 20):

²⁸ **Անգլիերեն**-ն իբրև գլխաբառ կա Ստ. Մալխասյանի բացատրական բառարանում: Բառահոդվածում հեղինակը փակագծերում այսպիսի դիտարկում է արել. «Ներկայումս յաճախ գործ է ածվում անգլերէն» (Մալխասյանց 1944, 101):

²⁹ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1972, 386:

³⁰ Աղայան 1976, 518: Այս մոտեցումն անփոփոխ է մնացել նաև այստեղ՝ Աղայան 2014, 474:

³¹ Բարսեղյան 1973, 387:

վիերեն» բացատրությամբ և առանձին **լատվիերեն** բառարանային միավորը³²: Հստակ երևում է կազմողների հակվածությունը **լատվիերեն** տարբերակին:

Ուշադրության արժանի է հայ-ռուսերեն ակադեմիական բառարանի մոտեցումը: Այս բառարանում զետեղվել են (ի դեպ, իրար անմիջապես հաջորդելով) լեզվի անվան երկու տարբերակները՝ իրենց երեք իմաստների ու խոսքիմասային արժեքների նշումով և թարգմանությամբ: Այսպես՝ **լատիշերեն** – 1. գ. Латышский язык, 2. փ. Латышский (о языке), 3. մ. По-латышски, на латышском языке և **լատվիերեն** – 1. գ. Латвийский язык, 2. փ. Латвийский (о языке), 3. մ. По-латвийски, на латвийском языке³³: Սակայն այս բառերը բառարանային որևէ հղումով կամ առնչության մատնանշումով միմյանց կապված չեն: Այսպես բառարանից օգտվողի գործը որոշակիորեն դժվարանում է՝ արդյոք սրանք նո՞ւյն, թե՞ տարբեր լեզուներ են նշանակում և այլն: Մեր կարծիքով այսպիսի ընտրության հարցում առկա է ակադեմիական բացատրական բառարանի ազդեցությունը:

Համանման մոտեցում է ցուցաբերվել հայերեն-անգլերեն վերջին բառարաններից մեկում: Այսպես՝ **լատիշերեն** – Lettish, the Lettish language և **լատվիերեն** – Latvian, the Latvian language³⁴:

Արևմտահայերենի երկհատոր բացատրական վերջին բառարանում **Լատվիայի ժողովրդի լեզվի անունը** կա **լատվիական բառահոդվածում**՝ «Լատվիոյ՝ Լատվիացիներու՝ լատվիերէն լեզուին յատուկ՝ վերաբերեալ»³⁵: Սա հուշում է, որ գրական արևմտահայերենը նախընտրում է **լատվիերէն**-ը: Իբրև ասվածի հաստատում՝ նշենք, որ հայերեն-գերմաներեն սփյուռքյան ընդարձակ նոր բառարանում **լատիշ** և **լատիշուիի** (Lette m, Lettin f) բառերը հատուկ նշումով դիտարկվել են որպես արևելահայերեն (լատիշերեն-ը բացակայում է), իսկ **լատվիերէն**-ը (Lettisch ո՞ն)՝ ընդհանուր հայերեն (կամ էլ պարզապես արևմտահայերեն)³⁶, քանի որ լրացուցիչ ծանուցումով օժտված չէ:

Նկատելի է, որ **լատվիերեն**-ը վերջին շրջանում աշխուժացել է հաստատյալ լրատվամիջոցների լեզվում: Օրինակներ՝ «Ա. Թովչյանի «Բանկ

³² Նազարյան, Գյոդակյան 2004, 172:

³³ Հայ-ռուսերեն բառարան 1987, 271:

³⁴ Բարաթյան 2002, 229:

³⁵ Շէրէճեան, Տոնկեան 1992, 757:

³⁶ Թորոսեան 2019, 269:

Օտոման» վեպը՝ լատվիերեն» («Ազգ», 5.02.2021), «Վալրա Սալմինյան, որն ուսանել է Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության բաժանմունքում, լատվիերեն է թարգմանել Գրիգոր Նարեկացու «Մատենանոցի ողբերգության» ընդարձակ հատվածներ» («Ազգ», 21.02.2019), «Գիրքը անգլերենից լատվիերեն թարգմանել է Իլգե Պաեգլե-Մկրտչյանը» (www.mfa.am. ՀՀ արտաքին գործերի նախարարության կայքն է, 10.05.2015): Այսպիսով ընդհանրություն է հաստատվում երկու գրականների միջև:

Գիտական խոսքում թեև իշխում են **լատվերեն**-ը և **լատիշերեն**-ը, հանդիպում է նաև **լատվիերեն**-ը³⁷:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հարկ է պարզել նաև, թե բալթիական այս լեզվի անվան ո՞ր տարբերակը գործածության ինչպիսի՜ պատկեր ունի Արևելահայերենի ազգային կորպուսում (ԱՐԵՎԱԿ)³⁸: Ըստ ԱՐԵՎԱԿ-ի՝ **լատիշերեն** բառույթը գործածվել է 21, **լատվերեն**-ը՝ 11, **լատվիերեն**-ը՝ 3, իսկ **լեթթերեն**-ը՝ 2 անգամ: Վիճակագրական տվյալները ակներև են դարձնում, որ արևելահայերենում նախապատվությունը տրվել է **լատիշերեն**-ին, որը գրեթե կրկնակի ավելի գործածություն ունի **լատվերեն**-ի նկատմամբ: Եվ, իհարկե, կարևոր է պարզել, թե ինչպիսի տեքստերում են գործածվել հետազոտվող տարբերակները: Դրանք են՝ Հայկական սովետական հանրագիտարան, մամուլ («Գրական թերթ», «Ազգ», «Առավոտ», «Հայկական ժամանակ», «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ»), աշխարհագրական անունների բառարան, թարգմանական և ճանաչողական մեկ-երկու գրքեր: Ընդհանուր 37 գործածությունից 24-ը հանրագիտարանից է: Հանրագիտարանում բառագործածության պատկերն այսպիսին է՝ **լատիշերեն**՝ 12, **լատվերեն**՝ 7, **լատվիերեն**՝ 3, **լեթթերեն**՝ 2 անգամ: Փաստորեն հանրագիտարանում իբրև գլխաբառ տրվել է **լատվերեն**-ը, սակայն **լատիշերեն**-ն ավելի բարձր հաճախականություն ունի: Միաժամանակ պիտի ասել, որ տարբերակային այսպիսի խայտաբղետություն հանրագիտարանում չպիտի լիներ (**լեթթերեն**-ի խնդիրը տարբեր է. արդի փուլում այն, ինչպես ասացինք, հնացած է):

³⁷ Համբարձումյան 2012, 186 (լեզուների անվանացանկում **լատվիերեն**-ի կողքին փակագծերում տրված է **լատիշերեն**):

³⁸ www.eanc.net:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփ ներկայացնենք, թե այս լեզվի անվան տարբերակներն ինչպես են ներկայացված հայերենի բառարաններում:

1. Բառարանում ներկայացված է միայն մեկ տարբերակ՝

ա. լատիշերեն (հայ-ռուսերեն (1960, 2010), հայ-ադրբեջաներեն, (արևելա)հայերեն-գերմաներեն, Ա. Բարլեզիզյանի հայ-ֆրանսերեն բառարաններ),

բ. լատվերեն (Ա. Ղարիբյանի և Գ. Պարիսի, Ա. Ղարիբյանի և Գ. Շելյանի դպրոցական ուղղագրական բառարաններ):

Ա. Ղարիբյանի և Գ. Պարիսի և դպրոցական ուղղագրական բառարան), լատվիերեն (Լ. Թորոսյանի հայերեն-գերմաներեն բառարան):

2. Բառարանում ներկայացված են երկու տարբերակներ՝

ա. լատիշերեն և լատվիերեն (ակադեմիական բացատրական և հայ-ռուսերեն (1987), Ն. Բարաթյանի հայերեն-անգլերեն, Էդ. Աղայանի բացատրական, ուղղագրական դպրոցական (2004) բառարաններ):

բ. լեթերեն և լատիշերեն (հայ-ռուսերեն լեզվաբանական բառարան):

3. Բառարանում ներկայացված են երեք տարբերակներ՝

ա. լատվերեն, լատիշերեն, լեթերեն (Հայկական սովետական հանրագիտարան),

բ. լատվիերեն, լատիշերեն և լեթերեն (Հովհ. Բարսեղյանի ուղղագրական-տերմինաբանական բառարան):

Այսպիսով, քննարկվող լեզվի տարբերակների վերաբերյալ ամփոփիչ մի քանի դիտարկումներ անենք:

1. **Լեթերեն**-ը հնացած է, անգամ մասնագիտական խոսույթից դուրս է մղված, արձանագրված չէ ժամանակակից հայերենի բացատրական և թարգմանական ընդարձակ բառարաններում: Արդի փուլում բառն ինքնին ընկալելի և պատճառաբանված չէ. հայերենում կապ չկա լեզվի անվան և երկրանվան միջև:

2. **Լատվիերեն**-ը արձանագրված է ժամանակակից հայերենի բացատրական, ուղղագրական և թարգմանական (հայ-ռուսերեն, հայերեն-անգլերեն, հայերեն-գերմաներեն) ընդարձակ բառարաններում, սակայն արդի փուլում ամենից շար գործածվող բառարաններից մեկը (Էդ. Աղայանի) այն սխալ է համարում: Այս տարբերակը մինչև վերջին ժամանակները սահմանափակ գործածություն ուներ արևելահայերենում, բայց այս տարբերակն է նախընտրում արևմտահայերենը: Հայախոս հանրությանը

հասկանալի է, քանի որ ակնհայտ է կապը երկրանվան (և ազգի անվանման) հետ:

3. **Լապիշերեն**-ը դասագրքային է, բոլոր տարբերակների համեմատ ունի գործածության բարձր հաճախականություն, գրանցվել է ժամանակակից հայերենի միալեզվյան և թարգմանական տարբեր բառարաններում: Հայախոս հանրությանն ընկալելի է, քանի որ տվյալ ազգի ինքնանվանմանն աղերսվող լապիշ, լապիշուհի և լապիշական բառերը միանգամայն հասկանալի և գործածական են:

4. **Լապվերեն**-ը լեզվաբանական գրականության մեջ գործածվող տարբերակ է, գրանցված է հանրագիտական և բանասիրական տարբեր բառարաններում, գործածության հաճախականությամբ զիջում է միայն լապիշերեն-ին: Ուղղակիորեն աղերսվում է երկրանվան ու ազգի անվանման մի տարբերակին (Լապվիա և լապվիացիներ):

Ինչպես տեսանք, XX դարի ականավոր լեզվաբաններից Հր. Աճառյանը գործածել է լեթերեն, Էդ. Աղայանը՝ լապիշերեն, Գ. Զահուկյանը՝ լապվերեն տարբերակները:

Բ. ԼԻՏՎԱՅԻՆԵՐԻ ԼԵՉՎԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՆՈՒՆԸ

Լիտվայի միակ պետական լեզուն երկրի բնիկ բնակչության՝ լիտվացիների լեզուն է, որի այբուբենը լատինագիր է, գրավոր աղբյուրները՝ XVI դարից: Վերջին հարյուրամյակում հայերենում այս լեզվի անվան մի քանի տարբերակներ են գործածվել: Ներկայացնենք դրանք:

1. ԼԻՏՎԱՆԵՐԵՆ

XX դարի առաջին կեսին Հր. Աճառյանը գործածում է **լիթվաներեն** անունը³⁹ (ֆրանս. lituanien, անգլ. Lithuanian language), որն այժմ ընդունված **լիտվաներեն**-ի ուղղագրական մի տարբերակն է: Աճառյանի լիակատար քերականության բազմահատորյակի յուրաքանչյուր հատորի վերջում զետեղված լեզուների ցանկում հղում է արվում **լիտվաներեն**-ին⁴⁰: Նույն կերպ է արվել «Լեզվաբանական բառարանում», որտեղ **լիթվաներեն**-ը գլխաբառ է դարձել⁴¹:

³⁹ Աճառյան 1940, 88:

⁴⁰ Հմմտ., օրինակ, Աճառյան 1955, 642, Աճառյան 1957, 998 և այլն:

⁴¹ Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան 1975, 134:

Ավանդական ուղղագրությամբ **Լիթուաներեն** տարբերակը տրված է արևմտահայերենի թարգմանական բառարաններից մեկում (անգլ. Lithuanian)⁴²:

Եվրոպական լեզուների ազդեցությամբ արևելահայերենում ձևավորված **լիթվաներեն/լիտվաներեն** տարբերակայնությունն արագ վերացավ ռուսերենի ազդեցությամբ: Նախընտրելի դիտվեց **տ**-ով տարբերակը, քանի որ այդ հնչյունով են հայերեն արտասանվում մերձբալթյան երկրի և ազգի անունները՝ **Լիտվա - լիտվացի, լիտվան, լիտվին** և այլն (լիտվացիների ինքնանվանումը՝ **լետովայ**, երկրանունը՝ **Լիտուվա**, կրկին **տ**-ով են):

Լիտվաներեն անունը գործածվել է Էդ. Աղայանի համալսարանական հիշված դասագրքում, թերևս նրա ազդեցությամբ՝ նաև վերջին տարիներին լույս տեսած համալսարանական և դպրոցական դասագրքերում, գիտական աշխատություններում⁴³:

Էդ. Աղայանի բացատրական բառարանում տրված է **լիտվաներեն**-ը՝ «1. գ. լիտվանների լեզուն, լիտվերեն, 2. ած., մկբ. լիտվանների լեզվով» իմաստներով⁴⁴, ինչպես նաև **լիտվերեն**-ը՝ «Նույնն է Լիտվաներեն» բացատրությամբ: Բայց պիտի նկատենք, որ այսօր **լիտվաններ** ձևն արդեն հնացել է՝ տեղը զիջելով **լիտվացիներ**-ին:

2. ԼԻՏՎԵՐԵՆ

Սա **երեն** ածանցով լեզուների անուններ կազմելու միջոցի օրինաչափ արդյունք է. կրճատվել է **լիտվացի** բառի **–ացի** ածանցը:

XX դարի երկրորդ կեսից հայերեն լեզվաբանական գրականության մեջ լիտվացիների լեզվի **լիտվերեն** անունն է հիմնականում գործածվում, այս տարբերակն է ընտրվել նաև դպրոցական մի դասագրքում⁴⁵: Այնուամենայնիվ, **լիտվաներեն – լիտվերեն** զուգաձևությունը պահպանվում

⁴² Գույումճեան 1970, 1131:

⁴³ Հմմտ., Աղայան 1967, 577, 611, Խաչատրյան 2017, 140, Եզեկյան, Սարգսյան, Սաքապետոյան 2009, 7, «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր» 1979, 376:

⁴⁴ Աղայան 1976 531: Այս բառարանի խմբագրված տարբերակում չկան ո՛չ **լիտվաներենը** և ո՛չ էլ **լիտվերեն**-ը (Աղայան 2014):

⁴⁵ Ջահուկյան 1960, 193, 289, 450 և այլն, Ջահուկյան 1987, 668: Նաև թարգմանական գործերում, ինչպես՝ Մեյե 1978, 12, 13 և այլն, Գյուրջինյան, Հեքեքյան 2010, 5:

է⁴⁶: Երկու տարբերակների ընդունելի լինելու արձանագրումը կատարվում է **լիտվերեն**-ի առաջնայնությունն ընդունելով⁴⁷:

Լեզվի այս անունը տարբերակայնությամբ ներկայացված է ակադեմիական, Էդ. Աղայանի բացատրական և Հովհ. Բարսեղյանի ուղղագրական-տերմինաբանական բառարաններում: Հայկական սովետական հանրագիտարանում, ինչպես և հանրագիտական բառարանում երկու տարբերակ է տրված՝ **լիտվերեն**, **լիտվաներեն**⁴⁸. գլխաբառը **լիտվերեն**-ն է: Միալեզվյան բառարաններից միայն **լիտվերեն**-ն են ներկայացնում հանգաբառարանը և ուղղագրական դպրոցական բառարանը⁴⁹:

Ա. Ղարիբյանի ռուս-հայերեն բառարանում **ЛИТОВСКИЙ** բառահոդվածի **ЛИТОВСКИЙ ЯЗЫК** բառակապակցությունը թարգմանում է **լիտվերեն**⁵⁰: Առանց որևէ տարբերակի՝ միայն **լիտվերեն**-ն են ներկայացնում հայերենի թարգմանական մի շարք բառարաններ՝ հայ-ադրբեջաներեն, հայ-ռուսերեն, հայերեն-անգլերեն, հայերեն-ֆրանսերեն, հայերեն-գերմաներեն⁵¹: Հարկ է նկատի ունենալ, որ եվրոպական լեզուներին և ռուսերենին առնչվող բառարաններում արդեն իսկ միօրինակություն է հաստատված, և հակվածությունը **լիտվերեն**-ի կողմն է:

2. ԼԻՏԱՎԵՐԵՆ

Լիտվացիների լեզվի անվան այս տարբերակի հիմքում ընկած է **Լիտավա** «Լիտվա» անունը, որ համեմատելի է եվրոպական մի շարք լեզուներով «Լիտվայի ժողովրդի լեզու» նշանակող բառերի հետ՝ գերմ. Litauisch, նորվեգ., շվեդ. litauisk:

⁴⁶ Զուգաձևություն է նկատվում անգամ նույն հեղինակի միևնույն աշխատության շրջանակում (Աղայան 1974, 21, 26՝ **լիտվերեն**, էջ 36, 83՝ **լիտվաներեն**):

⁴⁷ Համբարձումյան 2012, 186 (լեզուների անվանացանկում նախ տրված **լիտվերեն**-ը, ապա՝ փակագծերում՝ **լիտվաներեն**-ը):

⁴⁸ Հայկական սովետական հանրագիտարան 1978, 635, Հանրագիտական բառարան 2016, 941:

⁴⁹ Հայոց լեզվի հանգաբառարան 1976, 354, Նագարյան, Գյոդակյան 2004, 177:

⁵⁰ Ղարիբյան 1968, 442:

⁵¹ Բաղրամյան, Խալիլով 1978, 199, Հայ-ռուսերեն բառարան 1987, 276, Բեդիրյան, Ղարիբյան, Անմեդիկյան 2010, 145, Բարաթյան 2002, 233, Գասպարյան 1999, 135, Բարլեզիզյան 2009, 378, Գաբրիելյան, Սարգսյան և ուրիշներ 2000, 151, Թորոսեան 2019, 275:

Լիտավերեն-ը հայերեն լեզվաբանական գրականության մեջ չի հանդիպում, թերևս եզակի կիրառության հիման վրա գրանցված է «Լեզվաբանական բառարանում»⁵²:

2. ԼԻՏՈՎՅԵՐԵՆ

Հայերենի ակադեմիական բացատրական բառարանում գրանցված **լիտվաներեն** և **լիտվերեն** տարբերակներից հղում է արվում **լիտովցերեն**-ին, որ ներկայացված է երեքական իմաստով և արժեքով՝ «1. մկբ. լիտվական լեզվով, 2. գ. լիտվացիների լեզուն, 3. ած. լիտվական»⁵³: Փաստորեն նախապատվությունը տրվել է ամենաանհաջող տարբերակին. իբր լիտովցիների, այսինքն՝ լիտվացիների լեզու: Հավելենք, որ նույն բառարանում կան **լիտվան**, **լիտվանուհի**, **լիտվացի**, **լիտվուհի**, բայց **լիտովցի**՝ ոչ⁵⁴: Լեզվանվան անհանձնարարելի տարբերակ է: Լիտվայի հին անուններից մեկը եղել է **Լիտովա** կամ **Լիտովիա** (հմմտ. լատիներեն Lithovia). այստեղից է բառակազմական հիմքը:

Բառակազմական ընթացքը, որ լեզվանունն ստեղծվում է ազգերի անվան հիման վրա (**-ացի/-եցի/-ցի** ածանցով), օրինաչափ է: Լեզուների անունների նախատիպերի մասին խոսելիս այդ մասին նշում է Ս. Գալստյանը՝ բերելով բացառությունների հետևյալ օրինակները՝ **վրացերեն**, **եբրայեցերեն**, **լիտովցերեն**⁵⁵, երբ ածանցը չի կրճատվում: Այս տարբերակն այլուր մեզ չի հանդիպել:

2. ԼԻՏՈՎԵՐԵՆ

Բալթիական այս լեզվի մի տարբերակն էլ **լիտովերեն** բառն է: Առաջին հայացքից թվում է՝ կազմվել է ռուսերեն **литовский** (литов/ский) բառի համաբանությամբ. հայերեն **լիտով**+երեն:

⁵² Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան 1975, 134:

⁵³ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1972, 413:

⁵⁴ Գրավոր խոսքում **լիտովցի** բառը հազվադեպ է: Հմմտ. «Այս մի ափում՝ երիտասարդ **լիտովցիները** ահեղ», «Մինչդեռ զուրկ են նման բախտից քանի՜ գերի **լիտովցիներ**» (Պ. Սևակ 1973, 201, 232. Ա. Միցկևիչի «Կոնրադ Վալլենրոդ» պոեմի թարգմանությունը): Այն, որ բառը նտրությունը չափաժողի թելադրանքով չի արվել, ապացուցում է հետևյալ գործածությունը. «Վերարտադրվում է ննջեցյալներին հիշելու կիսահեթանոսական ծեսը, որ այն ժամանակ դեռ պահպանվելիս է եղել **լիտովցիների** և բելոռուսների մոտ» (Պ. Սևակ 1974, 11): Ի դեպ, հիշյալ պոեմի թարգմանության մեջ Պ. Սևակը գործածել է նաև **լիտվին** և **լիտվացի** բառերը:

⁵⁵ Գալստյան 1978, 130:

Կարող է մեկնաբանվել այսպես. **լիտովցի** բառի **-ցի** վերջածանցն է կրճատվել, որ սովորական ընթացք է լեզուների անուններ կազմելիս, **լիտով** բառակազմական հիմքին ավելացել է **-երեն** ածանցը: **Լիտովցերեն**-ի անաժանց տարբերակն է:

Բառը խիստ հազվադեպ է, բառարաններում չի գրանցվել: Մեզ հանդիպել է միայն մեկ անգամ՝ ամենայն հայոց բանաստեղծի խոսքում. «Հին սլավոներեն opati, **լիտովերեն** árti, սանսկրիտերեն ar»⁵⁶:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այժմ տեսնենք, թե ինչպիսին է լիտվացիների լեզուն անվանող բառային տարբերակների գործածության պատկերը Արևելահայերենի ազգային կորպուս լեզվաբանական որոնողական համակարգում: ԱՐԵՎԱԿ-ում **լիտվերեն** բառը գործածվել է 59 համատեքստում, որից 37-ը «Հայկական սովետական հանրագիտարանում», **լիտվաներեն**-ը՝ 8, որից հանրագիտարանում՝ 5-ը, **լիտավերեն**, **լիտովցերեն** և **լիտովերեն** տարբերակներով գործածություններ չկան: Տարբերությունն ակնառու է. **լիտվերեն**-ը **լիտվաներեն**-ից 7 անգամ ավելի շատ է գործածվել: Վիճակագրական այս տվյալները հիմք են տալիս եզրակացնելու, որ ներկա փուլում տարբերակների մրցակցությունում հաղթել է **լիտվերեն**-ը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփ ներկայացնենք, թե այս լեզվի անվան տարբերակներն ինչպե՛ս են ներկայացված հայերենի բառարաններում:

1. *Բառարանում ներկայացված է միայն մեկ տարբերակ՝*

ա. *լիտվերեն (հանգաբառարան, ուղղագրական դպրոցական բառարան (2004), հայ-ադրբեջաներեն, հայ-ռուսերեն ակադեմիական, հայ-ռուսերեն գործնական, հայերեն-անգլերեն, հայերեն-ֆրանսերեն, հայերեն-գերմաներեն բառարաններ),*

բ. *լիտվաներեն (հայ-ռուսերեն լեզվաբանական բառարան, դպրոցական ուղղագրական բառարան (1981)):*

2. *Բառարանում ներկայացված են երկու տարբերակներ՝*

ա. *լիտվաներեն և լիտվերեն (դպրոցական ուղղագրական (1959), էդ. Աղայանի բացատրական, Հովհ. Բարսեղյանի ուղղագրական-տեր-*

⁵⁶ Հովհ. Թումանյան 1997, 342:

մինաբանական բառարաններ, Հայկական սովետական հանրագիտարան),

բ. լիտվաներեն և լիտվերեն («Լեզվաբանական բառարան»):

3. Բառարանում ներկայացված է երեք տարբերակ՝ լիտվաներեն, լիտվերեն և լիտովցերեն (ակադեմիական բացատրական բառարան):

Նկատելի է, որ հայերենի թարգմանական բառարանները բալթիական լեզուների անունների հարցում հակված են միօրինակության:

Այսպիսով, քննարկվող լեզվի տարբերակների վերաբերյալ ամփոփիչ մի քանի դիտարկումներ անենք:

1. **Լիտվաներեն**-ը հայախոս հանրույթն ընկալում է որպես հնացած, թեև բառը գործածվում է համալսարանական և դպրոցական դասագրքերում, արձանագրված է ժամանակակից հայերենի բացատրական, ուղղագրական և լեզվաբանական բառարաններում: Լեզվի անվան և երկրանվան միջև կապը հստակ ընկալելի չէ:

2. **Լիտվերեն**-ը արձանագրված է ժամանակակից հայերենի միալեզվյան տարբեր բառարաններում, միայն այս տարբերակն են նախընտրում թարգմանական բառարանները: Հայախոս հանրությանը հասկանալի է, քանի որ ակնհայտ է կապը երկրանվան և ազգի անվանման հետ:

3. **Լիտավերեն, լիտովցերեն** տարբերակները բառարանային եզակի արձանագրումներ ունեն, ամենևին չեն գործածվում գիտական խոսքում և այլուր, **լիտովերեն**-ը հազվադեպ կիրառություն է ունեցել:

Եզրակացություններ

Տարբեր գործոններ հաշվի առնելով (բառակազմական ավանդույթ, համակարգայնության պահպանում, հայախոս հանրության համար ընկալելիություն, ներկա ժամանակաշրջանում գործածման հաճախականություն, բառարանային արձանագրումներ) և լեզուների հայերեն անվանացանկում տարբերակայնությունը վերացնելու ու միօրինակություն հաստատելու նպատակով առաջարկում ենք բալթիական յուրաքանչյուր լեզվի համար համընդհանուր գործածության մեկ անուն որդեգրել:

Լատվիացիների կամ լատիշների լեզվի համար տարբերակներից կարելի է նախընտրելի համարել **լատվերեն**-ը, լիտվացիների լեզվի համար՝ **լիտվերեն**-ը: Իհարկե, քննարկման նյութ կարող է դառնալ նաև **լատվիերեն** տարբերակը, հատկապես արևելահայերենի և արևմտահայերենի:

յերենի բառային կազմերի միջև նույնականություն հաստատելու առումով:

Գրականություն

- Աբեղյան Մ. 1965, Հայոց լեզվի տեսություն, Երևան, «Միտք», 700 էջ:
- Աղաբեկյան Մ. 2017, Հայերենի համեմատական ուսումնասիրության հարցեր, Երևան, «Ասողիկ», 198 էջ:
- Աղայան Է.Բ. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1642 էջ:
- Աղայան Է.Բ. 2014, Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան, Երևան, «Մանմար», 1328 էջ:
- Աղայան Է.Բ. 1974, Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., 168 էջ:
- Աղայան Է.Բ. 1967, Լեզվաբանության ներածություն, Երևան, «Միտք», 638 էջ:
- Աղայան Է.Բ. 1987, Լեզվաբանության հիմունքներ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 736 էջ:
- Աղայան Է.Բ. 1958, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 412 էջ:
- Աճառյան Հ. 1940, Հայոց լեզվի պատմություն, I մաս, Երևան, Պետական համալսարանի հրատ., 357 էջ:
- Աճառյան Հ. 1952, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. I, Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 494 էջ:
- Աճառյան Հ. 1955, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ներածություն, Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 656 էջ:
- Աճառյան Հ. 1957, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 1012 էջ:
- Աճառյան Հ. 1971, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 699 էջ:
- Աճառյան Հ. 1977, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 363 էջ:
- Բաղդամյան Ռ.Հ., Խալիլով Ի.Հ. 1978, Հայ-ադրբեջաներեն բառարան, Երևան, «Լույս», 566 էջ:
- Բարաթյան Ն. 2002, Հայերեն-անգլերեն բառարան, Երևան, «Մակմիլան-Արմենիա», 592 էջ:
- Բարսեղյան Հ.Խ. 1973, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Երևան, «Լույս», 980 էջ:

- Բարլեզիզյան Ա. 2009, Հայերեն-ֆրանսերեն բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 976 էջ:
- Բեդիրյան Պ. 1966, Ստուգաբանություններ, «Պատմա-բանասիրական հանդես», N 2, 217-225 էջ:
- Բեդիրյան Պ.Ս., Ղարիբյան Զ.Ա., Անմեղիկյան Դ.Ե. 1987, Ռուս-հայերեն, հայ-ռուսերեն բառարան, Երևան, «Հայաստան», 640 էջ:
- Բեդիրյան Պ.Ս., Անմեղիկյան Դ.Ե., Ղարիբյան Զ.Ա. 2010, Հայ-ռուսերեն գործնական բառարան, Երևան, «Անտարես», 408 էջ:
- Գաբրիելյան Յ., Սարգսյան Լ. և ուրիշներ 2000, Հայ-գերմաներեն բառարան, Բյոլն, հեղ. հրատ., 400 էջ:
- Գալստյան Ս. 1978, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 326 էջ:
- Գասպարյան Ս. 1999, Հայերեն-ֆրանսերեն բառարան, Երևան, «Արեգ», 400 էջ:
- Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն. 2010, Հայոց լեզու, դասագիրք ավագ դպրոցի 10-րդ դասարանի համար (հումանիտար հոսք), Երևան, «Էդիթ Պրինտ», 224 էջ:
- Գույումճեան Մ. Կ. 1970, Ընդարձակ բառարան հայերենէ անգլիերէն, Բեյրութ, «Ատլաս», 1152 էջ:
- Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ. 2009, Հայոց լեզու, ավագ դպրոցի 10-րդ դասարանի հումանիտար հոսքի դասագիրք, Երևան, «Մակմիլան-Արմենիա», 224 էջ:
- Թորոսեան Լ. 2019, Ընդարձակ բառարան Հայերէնէ-Գերմաներէն, Վիեննա, հեղ. հրատ., 765 էջ:
- Թումանյան Հովհ. 1997, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, Երևան, «Գիտություն», 710 էջ:
- Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1972, հ. 2 (կազմեց Վ. Առաքելյանը), Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., 716 էջ:
- Խաչատրյան Լ.Մ. 2008, Լեզվաբանության ներածություն, Երևան, «Զանգակ», 304 էջ:
- Խաչատրյան Լ.Մ. 2017, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Երևան, «Զանգակ», 312 էջ:
- Համբարձումյան Վ. 2012, Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ, Երևան, «Գիտություն», 224 էջ:
- Հայ-ռուսերեն բառարան 1987, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., 736 էջ:

- Հայկական սովետական հանրագիտարան 1978, հ. 4, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 720 էջ:
- Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր 1979, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., 382 էջ:
- Հայոց լեզվի հանգաբառարան 1976, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 654 էջ:
- Հաննեյան Մ. 1998, Հայերենի հնդեվրոպական բառապաշարի թեմատիկ-իմաստային մի քանի խմբերի տարածքային բնութագիրը, «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», Երևան, «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան, էջ 145-227:
- Հանրագիտական բառարան 2016, հ. 1, Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 1120 էջ:
- Հարությունյանց Մ.Հ. 1963, Հայ-ռուսերեն լեզվաբանական բառարան, Երևան, 308 էջ (ծեռագրի իրավունքով):
- Հյուբշման Հ. 1990, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, Երևանի համալս. հրատ., 204 էջ:
- Ղարիբյան Ա.Ս. 1968, Ռուս-հայերեն բառարան, Երևան, «Հայաստան», 1424 էջ:
- Ղարիբյան Ա.Ս., Տեր-Մինասյան Ե.Գ., Գևորգյան Մ.Ա. 1960, Հայ-ռուսերեն բառարան, Երևան, Հայաստանի պետական հրատ., 442 էջ:
- Ղարիբյան Ա., Պարիս Գ. 1959, Դպրոցական ուղղագրական բառարան, Երևան, Հայպետուսմանկհրատ, 256 էջ:
- Ղարիբյան Ա.Ս., Շեկյան Գ.Ս. 1965, Դպրոցական ուղղագրական բառարան, Երևան, «Լույս», 216 էջ:
- Ղարիբյան Ա.Ս., Շեկյան Գ.Ս. 1981, Դպրոցական ուղղագրական բառարան, Երևան, «Լույս», 272 էջ:
- Ղափանցյան Գ.Ա. 1961, Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 364 էջ:
- Ճերեճեան Գնէլ արք., Տօնիկեան Փ.Կ. 1992, Հայոց լեզուի նոր բառարան, հ. 1, Բեյրութ, Կ. Տօնիկեան եւ Որդիք Հրատարակչատուն, 1306 էջ:
- Մալխասեանց Ստ. 1944, Հայերէն բացատրական բառարան, հ. 1, Երևան, Հայկական ՍՍՌ պետական հրատ., 608 էջ:
- Մեյե Ա. 1978, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 822 էջ:
- Նազարյան Ռ., Գյոդակյան Ա. 2004, Հայերեն ուղղագրական դպրոցական բառարան, Երևան, «Զանգակ», 520 էջ:

- Պետրոսյան Հ. Զ., Գալստյան Ս.Ա., Ղարազյուլյան Թ.Ա. 1975, Լեզվաբանական բառարան, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., 318 էջ:
- Ջահուկյան Գ. 1960, Լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 636 էջ:
- Ջահուկյան Գ. 2010, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, «Ասողիկ», 820 էջ:
- Ջահուկյան Գ.Բ. 1987, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 748 էջ:
- Սևակ Պ. 1973, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, «Հայաստան», 344 էջ:
- Սևակ Պ. 1974, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, «Հայաստան», 416 էջ:
- Սիմոնյան Ն.Մ. 1991, Հայերենի բայակազմության մի քանի հարցեր, «Հայոց լեզվի պատմության հարցեր», հ. 3, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 316 էջ:
- Սուքիասյան Հ. 1986, Աճականը հայերենում, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 252 էջ:

ԲԱԼԹԻԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Դավիթ Գյուրջինյան

Ամփոփում

Լեթթերեն բառը (հմմտ. գերմ. Lettisch, ֆրանս. letton) գործածվել է XX դարի առաջին կեսի լեզվաբանական գրականության մեջ, մասնավորապես Հր. Աճառյանի Արմատական բառարանում և մյուս աշխատություններում: Հնաբանություն է, հայախոս հանրությունը չի գիտակցում լեզվի անվան և երկրի անվան կապը: Գրանցված է միայն տերմինաբանական բառարաններում:

Լատիշերեն տարբերակը, որի բառակազմական հիմքը՝ **լատիշ**, անմիջականորեն կապվում է լատվիացիների **լատվիեշ** ինքնանվանման հետ, ավելի ուշ՝ խորհրդային շրջանում է կազմվել ռուսերենի ազդեցությամբ: Հանդիպում է համալսարանական և դպրոցական դասագրքերում, գրանցվել է միալեզվյան և թարգմանական բառարաններում: Մյուս տարբերակների համեմատ ունի գործածության բարձր հաճախականություն:

Լատվերեն-ի բառակազմական հիմքը Լատվիա երկրանունն է, որի **-իա** մասնիկն ընկել է: Գործածվում է լեզվաբանական գրականության մեջ, հաճա-

խականությամբ զիջում է միայն **լատիշերեն**-ին: **Լատվիերեն**-ի բառակազմական հիմքը **լատվիացի**-ն է, որի **-ացի** ածանցն ընկել է: Արձանագրված է ակադեմիական (բացատրական և հայ-ռուսերեն) և արևելահայերենի ու արևմտահայերենի թարգմանական տարբեր բառարաններում: Ակնհայտ է լեզվանման կապը երկրանվան և ազգի անվան հետ:

XX դարի առաջին կեսին Հր. Աճառյանը գործածում է **լիթվաներեն** անունը (հմմտ. անգլ. Lithuanian language), որն այժմ գործածական **լիտվաներեն**-ի (ֆրանս. lituanien) ուղղագրական տարբերակն է, թեպետ **լիտվան** ձևն արդեն հնացել է՝ տեղը զիջելով **լիտվացի**-ին:

Լիտվերեն-ը կազմվել է **լիտվացի** բառի հիման վրա: XX դարի երկրորդ կեսից լեզվաբանական գրականության մեջ այս անունն է հիմնականում գործածվում, իսկ թարգմանական բառարաններում ներկայացվում է որպես այդ լեզվի միակ անուն: **Լիտավերեն**-ի (հմմտ. գերմ. Litauisch) հիմքում ընկած է **Լիտավա** տեղանունը: «Լեզվաբանական բառարանից» բացի, այլուր չի հանդիպում: **Լիտովցերեն**-ն (<լիտովցի) անհանձնարարելի է, թեև ակադեմիական բացատրական բառարանում մյուս տարբերակները սրան են հղվում: **Լիտովերեն** տարբերակը կազմվել է **լիտով** հիմքից (հմմտ. ռուս. литовский): Նշված տարբերակներն այժմ անգործածական են:

Հաշվի առնելով հայերենի բառակազմական ավանդույթը, գործածման հաճախականությունը, բառարանային արձանագրումները և այլ գործոններ, ունենալով լեզուների անունների շրջանակում համակարգայնության պահպանման խնդիր՝ առաջարկվում է բալթիական յուրաքանչյուր լեզվի մեկ անուն որդեգրել՝ **լատվերեն** և **լիտվերեն**:

Բանալի բառեր՝ բալթիական լեզուներ, լեզուների անուններ, աշխարհի լեզուների անվանացանկ, տարբերակ, բառակազմական օրինաչափություն, կանոնարկում, լեթերեն, լատիշերեն, լատվերեն, լատվիերեն, լիտվաներեն, լիտվերեն, լիտավերեն, լիտովցերեն, լիտովերեն:

О ВАРИАНТНОСТИ АРМЯНСКИХ НАЗВАНИЙ БАЛТИЙСКИХ ЯЗЫКОВ

Давид Гюрджинян

Резюме

Слово **լեթերեն** (нем. Lettisch, фр. letton) встречается в армянском языкознании первой половины XX века, в частности, в этимологическом

словаре и в других трудах Р. Ачаряна и является архаизмом, зафиксированным лишь в терминологических словарях.

Вариант լատիշերեն «латышский», лексическая основа которого напрямую связана с латышским самоназванием *latvieš*, был создан в советский период под влиянием русского языка. Встречается в университетских и школьных учебниках, зарегистрирован в толковых словарях. Данный вариант имеет высокую частотность употребления по сравнению с другими вариантами.

Лексической основой варианта լատվերեն «латвийский» является название страны – Լատվիա (Латвия), из которого выпала частица -իա. Используется в научной литературе, по частоте употребления уступает только варианту լատիշերեն «латышский».

Словообразовательная основа слова լատվերեն «латвийский» – название латышского народа – լատվիացի, но без суффикса -ացի. Зарегистрировано в академических словарях (толковый и армяно-русский) и в различных переводческих словарях восточноармянского и западноармянского языка. Здесь очевидна связь с названием страны и этнонимом.

В первой половине XX века Р. Ачарян использовал слово լիթվա՜ներեն (англ. Lithuanian language), являющееся орфографическим вариантом ныне употребляемого լիտվա՜ներեն «литванский» (фр. Lituanien), однако лексическая основа լիտվա՜ն уже устарела, уступив место լիտվա՜ցի «литовец». Вариант լիտվերեն образован от слова լիտվա՜ցի – «литовец». Со второй половины XX века часто употребляется в лингвистической литературе, а в переводческих словарях фигурирует как единственное название литовского языка. Вариант լիտա՜վերեն (нем. Litauisch) основан на топониме Литавя. Встречается только в «Лингвистическом словаре», а լիտովցերեն (<редкое լիտովցի «литовец») – нерекомендуемый вариант, хотя и в академическом толковом словаре другие варианты приводятся со ссылкой на него. Вариант լիտովերեն образован на лексической основе լիտով (ср. русск. литовский). Указанные варианты ныне не употребляются.

Принимая во внимание словообразовательную традицию, частоту их употребления на сегодняшний день, словарные регистрации и иные факторы, имея целью сохранение системности в сфере названий языков, предлагаем зафиксировать одно название для каждого балтийского языка: լատվերեն «латвийский» и լիտվերեն «литовский».

Ключевые слова – балтийские языки, названия языков, перечень языков мира, канонизация, вариант, словообразовательная закономерность.

TOWARDS THE VARIANTS OF THE ARMENIAN NAMES OF THE BALTIC LANGUAGES

Davit Gyurjinyan

Abstract

The word լեթերեն (German: Lettisch, French: letton) is found in the Armenian linguistic literature in the first half of the 20th century, in particular in the etymological dictionary and in other works of R. Acharyan. It is an archaism, recorded only in terminological dictionaries.

The variant լատիշերեն "Latvian", the lexical base of which is directly related to the Latvian self-name latvieš, was formed in Soviet times under the influence of the Russian language. It is found in university and school textbooks, and is registered in explanatory dictionaries. It has a high frequency of use compared to other variants.

The lexical basis of the լատվերեն "Latvian" is the name of the country - Լատվիա (Latvia), from which the particle -իա dropped out. It is used in scientific literature, the second variant most frequently used after լատիշերեն "Latvian". The word-formation base of the word լատվիերեն "Latvian" is the name of the Latvian people - լատվիացի, the suffix of which has dropped out. It is registered in academic dictionaries (explanatory and Armenian-Russian) and in various translation dictionaries of the Eastern Armenian and the Western Armenian languages. In this formation, the connection with the name of the country and the ethnonym is obvious.

In the first half of the 20th century, R. Acharyan used the word լիթվաներեն (English: Lithuanian language), which is a spelling variant of the currently used լիտվաներեն "Lithuanian" (French: Lituanien), but the lexical base of լիտվան is already outdated, giving way to լիտվացի "Lithuanian person".

Variant լիտվերեն was formed from the word լիտվացի "Lithuanian person". Since the second half of the 20th century, it is often used in linguistic literature, and in translation dictionaries it appears as the only name for the Lithuanian language. The variant լիտալերեն (German: Litauisch) is based on the toponym

Litava. It is found only in the "Linguistic Dictionary", and լիտովցերեն (< լիտովցի "Lithuanian person") is not a recommended variant, although other variants refer to it in the academic explanatory dictionary. Variant լիտովերեն is formed on the lexical basis լիտով (cf. with the Russian литовский). These variants are not used currently.

Taking into account the word-formation tradition, frequency of use in the present period, dictionary records and other factors, with the aim of maintaining consistency in the field of names of languages, it is proposed to adopt a single name for each Baltic language: լատվերեն "Latvian" and լիտվերեն "Lithuanian".

Key words – Baltic languages, names of languages, list of languages of the world, canonization, variant, derivational regularity.